

14

2

u-51

2
4-51

03 AUG 2009

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄԲ. ԳՐՈՑ ԴԱՍԵՐ

«Կրթի մանուկը իր համբան սկսած
աշենը, որպէսզի ծերութեան աշենն ալ
անկէ չխոսորի:»



ՊԵՅՐՈՒԹ

1940

ՏՊԳՐ. ՇՆՈՐՀՈՐԵԱՆ

ՄԱՆԱԿԱՆ ՄԱՐԲԻՆ ՈՒ ՄԻՏԻՐԸ

Մանուկ մը ֆիզիքապէս կը զարգանայ օր ըստ օրէ: Ան իր փոքր տարիքին մէջ զսպումէ չափ հեռու է: Շարժուն էակ մըն է. չի կրնար երկար ատեն նոյն դիրքը պահել: Ան շարունակ փոփոխութիւն կ'ուզէ ունենալ:

Նոյնպէս մանուկը կը զարգանայ մտաւորապէս: Ան փոփոխութեանց կը կարօտի: Զի կրնար երկար ատեն նմանօրինակ պատմութիւններ մտիկ ընել: Միշտ փոփոխութիւն ըլլալու է:

ՄԱՆՈՒԿԻՆ ԲՆԱԾԻՆ

ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մանուկը ինքնին երեւակայական աշխարհի մը մէջ կ'ապրի: Անոր երեւակութիւնը չափ հեռուները կը սաւառնի. իրական կեանքէ չափ հեռու կ'ապրի: Ան կը հետաքրքրուի իր նմաններուն կեանքովը: Երբ արկածախնդրական նոր պատմութիւն մը լսէ, իր մէջ փափաք մը կ'արթննայ՝ որ ինքն ալ նոյն փորձառութեան տիրանայ, առանց մտաբերելու թէ, այդ իր կարողութենէն չափ վեր է: Նոր երեւակայութիւններ խոր արմատ ձգելով իր մտքին մէջ, հինները գրեթէ զանց կ'առնէ:

Ուստի, մանկանց այս տարիքին,

ուսուցիչը ուղեցոյցի գեր կը կատարէ, եւ անոր պատմութիւններն ու խրատները անսուտ, անսխալ նոր աշխարհէ մը կուգան: Այս հիման վրայ անոնք զարգանալով հետեւեալ բարի յատկութիւններու կը տիրանան. —

1. Հնազանդութեան,
2. Համեստութեան,
3. Հաւատարմութեան,
4. Ծննդատախօսութեան,
5. Զոհուելու պատրաստակամութեան,
6. Օգնելու փափաքին,
7. Անձնութեան,
8. Ունեցածով գոհանալու, եւն.

Մանուկին մէջ կապկելու, ընդօրինակելու սովորութիւնը զօրաւոր ըլլալով իր չրջանակին մէջ տեսած ամէն բանը շարունակ կ'ընդօրինակէ: Եթէ այս յատկութիւնը խոհեմ անձի մը առաջնորդութեամբ զարգանայ, ապագային պիտի ունենանք հոգեւոր յատկութիւններով յի անձ մը:

Մանուկին լաւագոյն առաջնորդներն են իր ծնողքը՝ հայրը եւ մայրը: Երկրորդ տեղը կը գրաւէ ուսուցիչը: Իսկ մանուկին անձնական փորձառութիւնները կարեւոր դեր կը խաղան անոր հոգեւոր եւ բարոյական զարգացման մէջ:



270-66

132-661

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՆՈՆՔ ՈՐՈՆՅ ՅԻՍՈՒՍ ՕԳՆԵՑ

Ա. ՅԻՍՈՒՍ ՄԱՆՐ ՏՂՈՅ ԲԱՐԵԿԱՄ ԿԸԼԼԱՅ ԵՒ ԿՕՐԶՆԷ ԶԱՆՈՆՔ ՄԻԿ. Ժ 13-6
Ոսկեղէն Հաւար — «Թող տուէ այդ մանր տղոց որ ինձի գան եւ մի արգիլեմ ասոնք, վասնզի Աստուծոյ քաղաւորութիւնը այդպիսիներուն է:» Մարկ. Ժ 14
Նպասակ — Յուսկել Յիսուսի մանուկներու հանդէպ ունեցած սերը եւ անոնց տուած կարեւորութիւնը:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մայրեր կը լսեն Յիսուսի գալը: Այս մասին մէջ կ'երեւակայենք խումբ մը մայրեր գիւղի մը մէջ, Հրէաստանի սահմանին մօտ. կը լսեն Յիսուսի այդ կողմէն անցնելը: Իրենց մանուկները հետեւին ունենալով, իրարու կը պատմեն Յիսուսի ունեցած սէրը մանուկներու հանդէպ: Այս խումբէն մէկը կը ճշդէ թէ ինչպէս Յիսուս մանուկ մը աշակերտներուն մէջ կեցուց ըսելով թէ ինչպէս մեծերը կրնան դաս առնել մանուկներէն եւ անոնց մէջ գտնուող բարի յատկութիւններէն: Մարկ. Ժ 36: Այս պատմութեան վրայ մայրերը կը զարմանան Յիսուսի մանուկներու հանդէպ ունեցած անհուն սիրոյն վրայ: Ուստի կ'որոշեն Յիսուսի քով երթալ որպէսզի Ան աղօթէ եւ օրհնէ իրենց մանուկները:

2. Մանուկներ Յիսուսի քեւեռուն մէջ: Մայրեր երբոր գիտցան թէ Յիսուս

սուս պիտի գայ, տարին իրենց զաւակները Յիսուսի, բայց աշակերտները արգիլեցին մանուկները, խորհելով թէ Յիսուս մանուկներուն համար չէ եկած: Սակայն Յիսուս տեսնելով յանդիմանեց աշակերտները եւ թող տուաւ որ մանուկները իրեն գան, զրկեց եւ սիրեց զանոնք եւ այս կերպով Յիսուսի բարեկամ եղան մանուկները:

Բաղդաստել անցեալի եւ ներկայի մտայնութիւնը: Յիշել այն առաւելութիւնները որ կը վայելին ներկայ դարու մանուկները: Օրինակի համար անցեալին մանուկները երբեք նկատուած չէին առնուել: Իսկ հիմա մանկանց համար կիրակնօրեայ դըպրոցներ կան, եւ պատանիներու համար մասնաւոր ժողովներ, Զանիցներ, Սբ. Գրոց դասեր, եւ այլն:

Գործնական կեդրոն: Երբեմն հոգեւոր երգերէ կարգալ իրենց. այս կերպով մանուկները գեղեցիկ տղերէն ազդուելով գոց կը սորվին եւ կ'երգեն:

Բ. ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲԺՇԿԷ ԷԻԻԱՆԻ ՏՂԱՅ ՄԸ. Յովն. Դ 46-54

Ոսկեղէն Հաւար — «Ու հաւատաց ինք եւ իր տունը:» Յովն. Դ 53

Նպասակ — Յայտնել քի ինչպէս Յիսուսի խօսքը տարածուեցաւ. նաեւ ցոյց տալ Աստուծոյ օգնելու եւ զոհուելու պատրաստակամութիւնը: Այս հոգին կը տեսնենք իր նամբորդութեանց մէջ, քաղաքի քաղաք եւ գիւղի գիւղ երթալով:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ազնուական մը կը լսէ Յիսուսի մասին: Այս մասին մէջ կ'երեւակայենք Կափառնայումի մէջ Հերովդէս թագաւորին սպասաւորին տղան հիւանդացած: Հօրը մեծ ցաւը: Բայց կը

մխիթարուի երբ կը լսէ թէ Յիսուս Հրէաստանէն դէպի Գալիլիա կուգայ: Կը լսէ թէ Յիսուս ճամբիւ վարդապետ մըն է եւ կը սիրուի մարդոցմէ: Կ'ուրախանայ երբ կը լսէ թէ հիւանդները կը բժշկէ: Ուստի ազնուականը

Կափառնայումէն կը մեկնի որ Յիսուս սը զիմաւորէ: Երեւակայեցէք ազնուականին համեստութիւնը որ ան մինչեւ Յիսուսի ոտքը կ'երթայ:

2. Ազնուականը կը փափաքի տեսնել Յիսուսը: Կը տեսնենք այս մասին մէջ որ ազնուականը Գալիլիայի Կանա քաղաքը կ'երթայ և Յիսուսը կը փնտռէ: Ինչ մեծ ուրախութիւն երբ դէմ առ դէմ Յիսուսի առջեւ կը գտնէ ինքզինք: Ուղագրութիւն կը գրտնէ այն անձը որ Յիսուսի բարեկամ կ'ըլլայ: Յիսուս կը կատարէ ազնուականին խնդրանքը: Ազնուականը չէր կարծէր թէ Յիսուս հեռուէն բժշկութիւն կրնար տալ իր տղուն: Յիսուս կրնար Կափառնայում երթալ, բայց ըսաւ գթալով, համեստութեամբ եւ լրջութեամբ. «Գնա՛, քու որդիդ ողջ է»:

3. Ազնուականը իր տան մէջ: Այս մասին մէջ կը տեսնենք ազնուական

նը իր տունը վերադարձած միջոցին. ան կը հաւատայ որ իր տղան թոյլ կուած է, որովհետեւ Յիսուսի մէջ գերբնական ոյժ մը գտած էր: Երեւակայեցէք ազնուական սպասաւորներուն զիրքը երբ կուգան տղուն բըժշկութեան ուրախ լուրը տալու:

Վերջացուր հետեւեալ կերպով. ան իր ազգականներուն իմաց կուտայ այն Բարեկամին, հրաշալի վարդապետին եւ Անոր անսահման սիրոյն մասին: Կ'երեւակայենք զինք եւ իր բարեկամները, բոլորն ալ հրապուրուած Յիսուսի պատմութեամբ եւ պատրաստ՝ ուրիշներուն աւետելու:

Գործնական կէտեր: Յոյց տուր Յիսուսի յոգնութիւնը ըրած ճամբորդութեան միջոցին ի սէր մարդոց: Ազնուականը Յիսուսը ոչ թէ միայն իր ընտանիքի անդամներուն ծանօթացնելով գոհացաւ, այլ բոլոր ազգականներուն եւ բոլոր մարդոց սկսաւ քատողել:

Գ. ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲԱՆԱՅ Ի ԾՆԷ ԿՈՅՐԻՆ ԱԶՔԵՐԸ Յոհն. Թ 1-12
Ոսկեղէն Հաւար — «Կոյր եի եւ հիմա կը տեսնեմ»: Յոյն. Թ 25
Նպասակ — Յայցենեմ մանուկներուն քե ինչպէս Յիսուսի սերը շարժեցաւ բարիք բերելու ի ծնէ կոյր մարդու մը եւ հետեւաբար բժշկեց:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Յիսուս կը տեսնէ կոյրը: Այս առաջին մասին մէջ կը տեսնենք թէ ինչպէս Յիսուս իր աշակերտներուն հետ գնաց Տաճարը աղօթելու, եւ կոյր մը տեսնելով Տաճարին գրան քով նստած, բժշկեց զանիկա: Երեւակայէ կոյրին ուրախութիւնը, երբ տեսաւ զարմանալի բաներ. օրինակ՝ աւրեւ, չէնքեր, ծառեր, թռչուններ, մարդիկ: Բայց ամէնէն հրաշալի բանը որ տեսաւ ան, Յիսուսի գէմքն էր:

2. Կոյրը իր ծնողքին եւ բարեկամներուն մէջ: Երեւակայենք մարդոց զարմանքը որ զինքը սկիզբէն կը ծանօթային:

3. Կոյրը կ'երկրպագէ Յիսուսի: Այս մասին մէջ կը տեսնենք Յիսուսը որ

կը գտնէ կոյրը եւ ինքզինք կը ծանօթացնէ անոր: Կոյրը կ'երկրպագէ Յիսուսի եւ Անոր բարեկամներէն մէկը կ'ըլլայ:

Գործնական կերպեր: (1) Երեւակայեցէք կոյրի մը ունեցած դժուարութիւնները՝ զրկուած բնութեան գեղեցկութիւնները տեսնելէ: Ուստի գոհանալով Տէրոյմէն՝ փառք տանք մեր ունեցածին համար: (2) Օգնել կոյր կնոջ մը եւ կամ կոյր մարդու մը: Ինչպէս որ մենք մեր անձնական գործերուն յառաջացման համար ամէն գժուարութիւն յանձն կ'առնենք, նոյնպէս ալ կոյրերու օգնելու համար նոյն պատրաստակամութիւնը ցոյց տալու ենք: Այցելեցէք կոյրի մը տունը եթէ կարելի է:

Դ. ԲՈՐՈՏ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵԿԱՄ Կ'ԸԼԼԱՅ Մատթ. Ը 1-4
Ոսկեղէն Հաւար — «Եւ Յիսուս իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր»: Մատթ. Ը 3
Նպասակ — Յայցենեմ մանուկներուն քե ինչպէս Յիսուս բարեկամացաւ բորոսի մը, այնպիսի մեկու մը որմէ մարդիկ նոյնիսկ հեռուէն կը գտնէին:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բորոսը կը վնասուի: Կ'երեւակայենք որ զիւզին ժողովուրդը բորոս մը կը վնասէ իր տունէն, առանձին հեռու անապատի մը մէջ, որ մարդիկ իր հիւանդութենէն չը վարակուին: Երեւակայենք բորոսը առանձին քարայրի մը մէջ:

2. Բորոսը կը լսէ Յիսուսի մասին: Յայտնենք թէ բորոսը ինչպէս մէկէ մը լսեց թէ Յիսուս լերան վրայ է եւ կը սորվեցնէ մարդոց Աստուծոյ թագաւորութեան մասին: Եւ ան հաւատալով կ'երթայ Յիսուսը զիմաւորելու:

3. Բորոսը Յիսուսի հետ դեմ առ

դեմ: Կ'երեւակայենք բորոսը որ Յիսուսի կը մօտենայ, այն ատեն երբ Յիսուս լեռնէն կ'իջնէր՝ Իրեն հետ ունենալով մեծ բազմութիւն մը: Մարդիկ կը հեռանան երբ կը տեսնեն բորոսը եւ կ'աղաղակեն «Անմաքուր, անմաքուր»: Բայց Յիսուս կը մօտենայ անոր եւ կը ծոխ վրան, կը շօշափէ ձեռքով եւ կը բժշկէ:

Գործնական կերպեր: (1) Մարդիկ կը գտնին հիւանդներէն, սակայն Յիսուս անոնց մօտ երթալով հետեւին կը նստի եւ կը բժշկէ զանոնք: (2) Հոգեւոր երգ մը սորվեցնել բորոսի մը բժշկութեան մասին: (3) Այցելել հիւանդ մը:

Ե. ՉՈՐՍ ՄԱՐԿԻԿ Կ'ՕԳՆԵՆ ՀԻԻԱՆԴԻ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ԵՐԹԱՆՈՒ ՀԱՄԱՐ Ղուկ. Ե 17-23

Ոսկեղէն Հաւար — «Եւ զնաց իր տունը ու Աստուծոյ փառք կուտար»: Ղուկ. Ե 25
Նպասակ — Յոյց տալ մանուկներուն Յիսուսի անհուն սերը՝ հիւանդներու հանդէպ, քե պատրաստ է զանոնք բժշկելու:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Անդամաւործին Յիսուսի գալը: Չորս բարեկամներ կուգան այցելելու իրենց անդամաւոր ընկերը, եւ իմաց կուտան Յիսուսի գալը: Կը լսեն որ Յիսուսի գտնուած տունը թէ զուրաւ թէ ներսը մարդոցմով լեցուն է. անոնցմէ շատնր կը բժշկուին իրենց հիւանդութենէն: Այս խօսակցութենէն վերջ կը ճշդեն Անոր կարողութիւնը եւ շաղկելով զայն Յիսուսի կը տանին:

2. Չորս բարեկամներ մեծ ուրախութեամբ կը բերեն իրենց հիւանդ բարեկամը Յիսուսի: Երեւակայէ անոնց անցնիլը չուկային մէջէն եւ տան մէջ խմբուած բազմութիւնը: Իրենց զժուար կուգայ այդ բազմու

թեան մէջէն ներս մտնել: Անդամաւործը կ'աղաղակէ թէ Յիսուս կարեւորութիւն չի տար իրեն ասանկ հոծ բազմութեան մէջ: Բայց բարեկամները կը հաւատան թէ Յիսուս պատրաստ է իրեն օգնելու եւ բժշկելու զինք:

3. Անդամաւործը Յիսուսի առջեւ: Չորս բարեկամները կը շաղկեն իրենց անդամաւոր բարեկամը, եւ տանիքէն իր մահիճով Յիսուսի առջեւ կ'իջեցնեն զինք: Կը վերջացնենք, Յիսուս անգամաւոր ծոխելով կարեւորութիւն կուտայ եւ զայն կը բժշկէ: Անդամաւործը ներկաներուն հետ փառք կուտայ:

Գործնական կէտեր. — Անդամաւործը իր բժշկութենէն ատաջ իր ցաւէն տառապելով շարունակ կը արտնջար,

կը գանդատէր եւ Աստուծոյ դէմ կը բողոքէր: Ներկայիս ալ շատեր նման ցաւերէ կը տառապին, բայց իրենց սիրտը եւ իրենց ծառայողներուն սիրտը Աստուծոյ սիրով ողորդուելով կը համբերեն: Այս ծառայութիւնը զիրենք երջանիկ կ'ընէ խորհելով թէ ինչ որ ընեն Տէրոջ համար է:

Զ. ՊԻՂԾ ՈԳԻ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԸ ԲԱՐԵԿԱՄ Կ'ԸԼԼԱՅ ԲՐԻՍՏՈՍԻ Մարկ. Ե 1-20
Ոսկեղէն Հատար — «Ան ալ գնաց եւ սկսաւ փառոյց ինչ որ Յիսուս իրեն քուռաւ:»
Մարկ. Ե 20

Նպասակ — Պեսք Ե յայտնեմք մանուկներուն քե ինչպէս Յիսուս սիրեց նոյնիսկ իւները:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —

1. Յիսուսի ծովուն վրայէն անցնելը: Այս մասին մէջ կը տեսնենք որ Յիսուս իր աշակերտներուն հետ գէպի նաւը կը յառաջանայ: Յետոյ ժողովուրդը արձակելէ վերջ Ան իր ճամբան կը շարունակէ գերեզմանոցներուն մէջէն:

2. Դիւանաւ մտնելը: Աշակերտները զարհուրելով կը նշմարեն մարդու մը շուքը որ իրենց կը մօտենայ: Յիսուս որ առանձին այդ ամայի վայրին մէջ կը գտնուէր, երբեք չաղջուեցաւ: Իսկ աշակերտները ընդհակառակը վախով համակուեցան: Յիսուս առանց աղջուելու եղած դէպքէն, կը յառաջանայ գէպի իրենց մօտեցող անձը: Յիսուսի յառաջանալը տեսնելով կը զարմանան աշակերտները եւ իրենց վախը կը փարատի: Հոն կը գտնուէր խոզերու երամակ մը: Անոնք խենթի ազգականէն վախնալով կը սկսին վազվառել եւ բարձր գահաւ վէժէ մը ցատկելով ծովուն մէջ կը խեղդուին:

3. Դիւանաւին հանդարտութիւնը առաջնորդելու գաղտնի կը պատահուի: Հոս կը տեսնենք որ դիւանաւը մօտենալով Յիսուսի՝ կ'երկրպագէ, եւ

Շինէ պղտիկ պատկերազարդ զիրք մը կամ կապ մը յուլունք, կամ փունջ մը ծաղիկ կամ գեղեցիկ խաղալիկ մը եւ զայն նուիրէ մանուկի մը, որ մահիճի մէջ հիւանդ պառկած է: Երեւակայէ անոր եւ նուիրողին երջանուելով:

Խելքը վրան կուգայ: Յիսուս ձեռքը դիւանաւին զխուսն վրայ դնելով կ'աղօթէ եւ կը բժշկէ զայն:

Կը վերջացնէք չեղելով դիւանաւին անմիջական բժշկութիւնը եւ ներկաներուն տաւառութիւնը: Երբ Յիսուսի առջեւ ծնրադրած կ'աղաչէր որ իր հետը երթայ, Յիսուս ըսաւ աւնոր, «Գնա քու տունդ, քու ընտանիքիդ պատմէ ինչ որ Տէրը քեզի ըրաւ:» Ան ալ գնաց եւ սկսաւ Դիւանաւին մէջ քարոզել եւ խնդրել որ Յիսուսը ընդունին:

Գործնական կէտեր: Բացատրութիւն դիւանաւի հիւանդութեան մասին: Նկարագրէ թէ ինչպէս մարդիկ հետու կը փախչին նման անձերէ: Մանուկները չըջանալով կենալով այս գէպին տրամախօսութիւնը կրնան ընել:

Շեք

ա) Դիւանաւին եկած ատեն պառաւ:

բ) Յիսուսի ներկայութեան լուռ եւ հանգարտ կենալով Անոր փառք տալը:

գ) Գիւղէ դիւղ շրջելով Յիսուսի սքանչելի պատմութիւնները քարոզելը:

ԵՐԿՈՐԴ ՄԱՍ

ԱՆՈՆԲ ՈՐՈՆԲ ՍԻՐԵՅԻՆ ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ՕԳՆԵՅԻՆ ԱՆՈՐ

Այս բաժնին մէջ մանուկներու համար գործնական եղող միջոցներ հայթայթելու է, որպէսզի տեսնելով հետաքրքրուին ընելու նման բարիքներ: Շինել պատկերազարդ զիրք մը, Յիսուսի բարեկամներուն ըրած գործերու պատկերներով: Թոյլ տալ որ մանուկներ ընտրեն այն պատկերները որ կը նախընտրեն: Այն նկարը թող գծեն մաքուր թերթի մը վրայ, եւ իւրաքանչիւրին վերը պատկերին պատմութիւնը ներկայացնող նիւթը, եւ տակը ոսկեղէն համարը: Ի վերջոյ իւրաքանչիւրին պատրաստած պատկերները հաւաքելով գրքի մը ձեւ տալով վրան գրէ «Յիսուսի Բարեկամներուն Գործերը»:

Բացատրութիւն Ուսուցիչներու

Վերոյիշեալ մասին մէջ ուսուցիչը բոլորովին ազատ ձգելու է մանուկները որ իրենց ուզածը ընտրեն: Իրենց ներքին զգացումէն կամ խիղճէն մղուած, բնական է ամէնէն շատ բարիք պարունակող պատկերը պիտի ընտրեն:

Ա. ՊԱՏԱՆԻ ՄԸ ՈՐ ՅԻՍՈՒՍԻ ԿԸ ՆՈՒՐԻՔ ԷՆԴԳ ՀԱՅ ՅՈՎՆ. Զ 1-13
Ոսկեղէն Հատար — «Եւ Յիսուս հացեր առաւ ու գոհացաւ եւ առաւորներուն բաժնեց:» Յովն Զ 11

Նպասակ — Յուցել քե ինչպէս Ղեւի իր ունեցած կերակուրը Յիսուսի ներկայացուց որպէսզի Տէրը կերակրէ ժողովուրդը:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —

1. Ղեւի կը պատրաստուի երբալ: Հոս կը բացատրենք Ղեւի միաբանութիւնը ընկերներուն հետ: Ղեւի լուր կուտայ մօրը. անկէ եւ իր ընկերներէն կը խնդրէ որ Յիսուսի քով երթան: Մայրը Յիսուսի կեանքէն տեղեկութիւն կուտայ: Ղեւի իր ձրկնորս հօրը եւ ընկերներուն հետ կ'երթայ: Մայրը հինգ հաց եւ երկու ձուկ կը դնէ իբր կերակուր որպէսզի կերցնէ իր ընկերներուն եթէ հարկ ըլլայ:

2. Ղեւի եւ ընկերները կ'երթան: Երեւակայենք անոնց դաշտին մէջէն երթալը, ճամբան ծաղիկ հաւաքելով եւ երգելով: Վերջապէս ցոյց կու տանք թէ ինչ մեծ ուրախութեամբ դացին Յիսուսը տեսնելու:

3. Ղեւի կերակուրը Յիսուսի կը ներկայացնէ: Ղեւի Յիսուսի դիմաց

կուգայ որ մօտէն Յիսուսը տեսնէ: Յիսուս ժողովուրդին մէջէն անցնելով մանուկներու հետ կը խօսի: Յետոյ Յիսուս աշակերտի մը հետ կը խօսի խնդրելով որ ճաշ պատրաստեն ժողովուրդին կերցնելու համար: Ղեւի աշակերտին տուած անհատատ պատասխանը կը լսէ, անմիջապէս ան իր քով ունեցած ճաշը կը ներկայացնէ: Յիսուս Ղեւին իր մօտ կը կանչէ, կը խօսի իրեն հետ եւ ճաշը առնելով կ'օրհնէ: Հինգ հացը եւ երկու ձուկը կը բաժնեն ժողովուրդին: Ինչ զարմանք, բոլորը ուտելէ եւ կշտանալէ վերջ որչափ ալ կ'աւելնայ: Ղեւի չափազանց կ'ուրախանայ տեսնելով որ Յիսուսի բարեկամներէն մէկն ալ ինք էր:

Գործնական կերպեր: Յիսուսի բարեկամական յարաբերութեան տարբերութիւնը մանուկներու եւ մեծերու հետ:

Բ. ՄԱՆՈՒԿՆԵՐ Կ'ԵՐԹԱՆ ՅԻՍՈՒՍԸ ԴԻՄԱՌՈՐԵԼՈՒ ԵՒ ԶԻՆՔ ՅԱՐԳԵԼՈՒ

Մասք. ԻԱ 1-17

Ոսկեղեն Հաւար — «Ովսաննա միգլոյ Դաւթի» Մասք. ԻԱ 9

Նպասակ — Յուցենեք քէ ինչպէս մանուկները դիմաւորելու եկան իրենց բարեկամ Յիսուսը եւ յարգեցին զինքն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Մանուկներ կը լսեն իրենց բարեկամ Յիսուսի գալը: Հոս կը յայտանենք թէ ինչպէս մանուկներ Յիսուսի քով երթալով պատմութիւններ լսեցին եւ Անոր հետեւեցան:

2. Մանուկներ կը յարգեն Յիսուսը: Մանուկներ Յիսուսը տեսնելով կը պոռային. «Ովսաննա Որդւոյ Դաւթի, օրհնեալ է ան որ Տէրօջը անունովը կուգայ»: Մի քանի մարդիկ ուղեցին

զանոնք լուսնել բայց Յիսուս թոյլ չտուաւ:

Կը վերջացնենք չեչտելով մանուկներու սէրն ու յարգանքը իրենց բարեկամ Յիսուսի հանդէպ:

Գործնական կերպեր: Ինչպէս որ հիմա գիւղէ մը կամ քաղաքէ մը եկող մեծ անձ մը դիմաւորելու կ'ելլեն, զարդարելով ճամբաները եւ պողոտաները, նոյնպէս ու աւելին ըրին զարեւր առաջ Յիսուսը դիմաւորելու համար:

Գ. ԲԱՐԵԿԱՄ ՄԸ ՈՐ ՅԻՍՈՒՍԻ ՕԹԵՒԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ — Յովհ. ԺԳ 1-17

Ոսկեղեն Հաւար — «Ան որ ձեր մէջ մեծ է այս պգիկին պէս թող ըլլայ»: Դուկ ԻԷ 25
Նպասակ — Յուցենեք քէ ինչպէս բարեկամ մը իր քան վերցնաւ Յիսուսի տուաւ որ հոն իր վերջին նաւը ընէ իր աւակերներուն հետ: Յոյց քանք անոր գօրաւոր սերը Յիսուսի հանդէպ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Յիսուսի բարեկամը զինք իրենց տունը կը հրաւիրէ: Ան կը յայտնէ Հրեաներուն Յիսուսի հանդէպ ունեցած հակառակութիւնը, եւ որոշումը որ զինք մեղցնել կ'ուզեն: Յիսուս կ'ըսէ թէ այդ բոլորէն ինք տեղեակ էր արդէն: Յիսուս փափաքեցաւ վերջին ընթրիքը իր աշակերտներուն հետ ընել, քանի որ տակաւին Հրեաներուն կողմէ ձերբակալուած չէր: Բարեկամը իր վերնատունը կուտայ Յիսուսի:

2. Բարեկամ մը վերնատունը երկու աշակերտներուն կը ցուցնէ: Հոս մանուկներ կը տեսնեն որ տանտէրը

կը զրկէ իր ծառան որ երթայ սպասաւորութիւն ընէ Յիսուսի եւ աշակերտներուն:

3. Տանտէրը որոշապէս կը տեսնէ Յիսուսի խոնարհ եւ հեղ հոգին, Անոր՝ զինչակը մէջքը կապելով աշակերտներուն ոտքը լուացած միջոցին: Յիսուս իր այս վարմունքով ցոյց կուտար որ մարդիկ զիրար սիրեն եւ իրարու ծառայեն: Բարեկամը զայս տեսնելով կը զարմանայ եւ իր սէրը կ'աւելնայ Յիսուսի հանդէպ զԱյն պաշտելու չափ:

Գործնական կերպեր: Խոնարհութիւնը եւ հաւատարմութիւնը բարեկամութեան հիմն են:

Դ. ՄԱՐԻԱՄ ԻՐ ԱՄԷՆԷՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ ԿԸ ՆՈՒԻՐԷ ՅԻՍՈՒՍԻ
Յովհ. ԺԲ 1-8

Ոսկեղեն Հաւար — «Յիսուսի ոտքերը օծեց եւ իր մազերովը Անոր ոտքը սըրբեց»: Յովհ. ԺԲ 3

Նպասակ — Յայտնէ մանուկներուն թէ Մարիամ ինչպէս իր ունեցած ամէնէն թանկագին բանը նուիրեց Յիսուսի:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Մարիամ կը լսէ Յիսուսի գալը Սիմոնեց տունը: Հոս կը տեսնենք որ Սիմոն խնճոյք մը կը պատրաստէ Յիսուսի համար, հրաւիրելով շատ մը ուրիշ բարեկամներ, իսկ Մարիամ կ'օգնէ այդ խնճոյքին պատրաստութեան: Մարիամ կը խորհի բան մը նուիրել Յիսուսի որ իր եւ իր եղբոր բարեկամն էր:

2. Մարիամ խնճոյքի մէջ: Երեւակայենք խնճոյքի միջոցին տեղի ունեցած զուարթ դէպքերը: Խնճոյքէն վերջ կը տեսնենք Մարիամը որ Յիսուսի հետ առանձին խօսակցութիւն մը կ'ունենայ: Յետոյ Մարիամ առանց ոեւէ մէկուն ուշադրութիւնը հրաւիրելու գուրս կ'ելլէ:

3. Մարիամ իր ունեցածին ամէնէն թանկագինը կը նուիրէ Յիսուսի: Հոս կ'երեւակայենք Մարիամը որ կը վերադառնայ Սիմոնեց տունը, մասնաւոր նպատակի համար ձեռքը բան մը պահելով: Մօտեցաւ Յիսուսի եւ չիչ մը կատրելով Յիսուսի ոտքերը իւղով կը լուար եւ իր մազերովը կը սրբէր: Երեւակայէ այդ անուշահոտ իւղը եւ անոր սուղ գինը: Շատեր նախանձեցան այս բանին համար, բայց Յիսուս ուրախացաւ: Նոյնպէս Մարիամ ուրախացաւ, որովհետեւ իր ունեցածին ամէնէն արժէքաւոր բանը նուիրած էր Յիսուսի:

Գործնական կերպեր: Յիսուսի նախընտրելի է որ մանուկներ նուէրներով երթան կարօտեալներուն եւ աղքատներուն այցելութեան:

Ե. ՄԱՐԴ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵԿԱՄ Կ'ԸԼԼԱՅ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՔԱՐՈՋԷ Գործք ԺԶ 2, Բ Տիմ. Ա 5, Դ 14

Ոսկեղեն Հաւար — «Բու պաշտօնդ կատարէ»: Բ Տիմ. Գ 5

Նպասակ — Յուցենեք մանուկներուն քէ ինչպէս Տիմոթէոս սիրեց Քրիստոսը եւ քարոզեց:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Տիմոթէոս շատ մը բաներ սովորեցաւ իր մօրմէն եւ մեծ մօրմէն: Հոս կ'երեւակայենք թէ Տիմոթէոս մօրիկ կ'ընէ մօրը եւ մեծ մօրը պատմած Հին Կտակարանի պատմութիւնները, թէ պիտի գայ Փրկիչ մը՝ փրկելու համար Հրեայ ցեղը: Այս կրթութեամբ Տիմոթէոս տիրացաւ նոր գիրքի մը, շնորհիւ Յիսուսի բարեկամութեան:

2. Տիմոթէոս կ'ուրախանայ երբ կը լսէ փափաքած լուրը: Հոս կ'երեւակայենք Պօղոսը որ այցելեց Տիմոթէոսեց տունը: Հոն մեծ ուրախութեամբ լսեցին Յիսուսի պատմութիւնները, մանաւանդ այն մասը որ Պաղեստինէն եկած էր: Պաղեստին Տիմոթէոսի հօր եւ մօր ծննդավայրն էր: Այդ երկրի մասին շատ լսած էր, բայց իր լսածներուն լաւագոյնը Փրկիչ Յիսուսի լուրն էր:

3. Տխմոթեոս կը սիրէ Քրիստոսը եւ կը հրաւիրէ մարդիկ որ Անոր բարեկամ ըլլան: Հոս կ'երեւակայենք Տիմոթէոսը, որ Պողոսէն կը լսէ Յիսուսի լուրը: Որչափ կը լսէր, փափաքը կ'աւելնար աւելին լսելու: Վերջապէս այս սէրը զինք առաջնորդեց Յիսուսի քարոզիչ մը ըլլալու:

Կը վերջացնենք Պողոսի քարոզը

2. ՓԻԼԻՊՊՈՍ ԵԹԷՆՈՎՊԱՅԻ ՆԵՐՔԻՆԻԻ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՕՍԻ

Գործք Ը 4-8, 26-40

Ոսկեղէն Հաւնար — «Իսկ Փիլիպպոս իր բերանը բացաւ եւ Յիսուսը քարոզեց անոր:» Գործք Ը 35

Նպասակ — Շնորհակալ թէ ինչպէս Փիլիպպոս ամենայն համարձակութեամբ զիւղէ զիւղ, քաղաքէ քաղաք կը համբողջէր Յիսուսը քարոզելու:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Երուսաղէմի մէջ Յիսուսի թըշնամիները Փիլիպպոսը կը հալածեն: Հոս կ'երեւակայենք որ մեծ վտանգներով շրջապատուած են Յիսուսի աշակերտները Երուսաղէմի մէջ: Այսուհանդերձ անոնք Յիսուսը կը քարոզէին անվախ: Կ'երեւակայենք Ստեփանոսի քարկոծուիլը Յիսուսի համար: Հետեւաբար Փիլիպպոս Երուսաղէմէ հեռացաւ եւ Սամարիա գնաց եւ հոն սկսաւ քարոզել:

2. Փիլիպպոս կը խօսի Եթէնովպացի ներքինիին Յիսուսի մասին: Հոս յայտնենք մանուկներուն թէ Փիլիպպոս քաղաքէ քաղաք կը շրջէր, չվախնալով Յիսուսը քարոզելու եւ կ'երթար ուր ու Աստուած զինք կ'առաջնորդէր: Յիշէ Եթէնովպացի Ներ-

Տիմոթէոսի աւետելով ժարդոց Յիսուս Փրկիչը:

Գործնական կեդրոն: Սէրը որ բարեկամութիւնը ժարդոց մէջ կը տարածէ: Մէկը Յիսուսի բարեկամ կ'ըլլայ եւ ուրիշներ տեսնելով անոնց միջեւ խաղաղ կեանքը իրենք ալ կը փափաքին անոնց բարեկամութիւնը վայելել:

Քինիին պատմութիւնը, ցոյց տուր հարստութիւնը, աղնուականութիւնը: Երեւակայէ թէ Փիլիպպոս գնաց առաջ՝ առանց վախնալու Յիսուսի ուրախ լուրը իմաց տալու: Երեւակայէ Ներքինիի յարգանքը Յիսուսի հանդէպ:

Գործնական կեդրոն: Դիւրամբողջ ներքին կերպով ցոյց տուր մանուկներուն այն կէտերը որ հասարակ մարդիկ հեռու կը պահեն յարաբերութիւն մշակելէ հարուստ դասակարգին հետ կամ կառավարական պաշտօնեաներու հետ: Օրինակի համար հարուստներ գոռոզ բնաւորութեան տէր ըլլալով եւ ճոխ կեանք մը ապրելով, հասարակ մարդիկ չեն համարձակիր յարաբերիլ անոնց հետ, որովհետեւ իրենց եւ անոնց միջեւ ահազին տարբերութիւն մը կը տեսնեն ամէն տեսակէտով:

Է. ՊԵՏՐՈՍ ԿԱՂ ՄԱՐԴՈՒ ՄԸ Կ'ՕԳՆԷ ԵՒ ԶԱՆԻԿԱ ԿԸ ԲԺՇԿԷ

Յովն ԻԱ, Գործք Գ 1-26

Ոսկեղէն Հաւնար — «Սիմոն Յովնանի որդի, զիս կը սիրե՞ս... արածէ իմ ոչխարներս:» Յովն ԻԱ 16

Նպասակ — Յայտնենք մանուկներուն թէ երբոր Պետրոս Յիսուսի անկեղծ բարեկամը եղաւ, սկսաւ մարդոց օգնել Յիսուսի անունով:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Պետրոս տեսաւ Յիսուսը յալութիւն առնելէ վերջ: Հոս կը տեսնենք Պետրոս մի քանի բարեկամներով ծովեզերքը ձուկ կ'որսայ: Յիսուսի խաչելութենէն վերջ Պետրոս եւ միւս աշակերտները վերադարձան իրենց առաջնական գործին: Պետրոս ուրախացաւ երբ նորէն Յիսուսը տեսաւ, եւ յիշեց այն խօսքը որ Յիսուս անգամ մը ըսած էր Մի վախճա՛: Ասկից կ'եզրակացնենք Յիսուսի հարցումը Պետրոսին ուղղուած:

Կը վերջացնենք ցոյց տալով Պետ-

րոսի սէրը եւ օգնելու պատրաստակամութիւնը Յիսուսի հանդէպ:

2. Պետրոս կաղ մարդու մը կ'օգնէ եւ զանիկա կը բժշկէ Յիսուսի անունով: Այս մասին մէջ կը տեսնենք Պետրոս եւ բարեկամ մը կ'երթան զէպի տաճար, եւ կը բժշկէ կաղ մը Յիսուսի անունով:

Կը վերջացնենք. — Կաղը փառք տալով բարեկամ կ'ըլլայ Յիսուսի:

Գործնական կեդրոն: Կերպով մը մեր բարեկամութիւնը ապացուցանենք իրարու հետ եւ Յիսուսի հանդէպ: Թեյադրէ որ մանուկները անոր նման օրինակներ տան:

Ը. ՊԵՏՐՈՍ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՐԵՆՑ ԲԱՐԵԿԱՄ ՅԻՍՈՒՍԸ ՄԱՐԴՈՅ ԿԸ ԳԱՐՈՋԵՆ

Գործք Դ 1-30

Ոսկեղէն Հաւնար — «Յիսուս Քրիստոսի անունով ասիկա ձեր առջեւ բժշկուած կեցեր է:» Գործք Դ 10

Նպասակ — Յայտնել մանուկներուն թէ Պետրոս եւ Յովհաննէս առանց Յիսուսի թշնամիներէն վախնալու կը քարոզէին:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Պետրոս Տաճարին մէջ ժողովուրդին կ'ըսէ թէ՝ Յիսուսի անունով այս կաղին օգնեց եւ բժշկեց: Երեւակայէ ժարդոց զարմանքը

2. Պետրոս կը ձերբակալուի: Հոս կը տեսնենք զպիւրներու եւ քահանաներու բարկութիւնը Պետրոսի հանդէպ: Յիսուսի թշնամիները ձերբակալեցին Պետրոսը որովհետեւ ան կը քարոզէր Յիսուսը:

3. Պետրոս ատենանին առջեւ: Զօրաւոր կերպով կը հարցաքննեն: Ան համարձակութեամբ, աղնուօրէն կը պատասխանէ Յիսուսի զօրութիւնով: Կաղը ներկայ էր Պետրոսի հետ եւ

կասկած չկար թէ Պետրոս զինք բըժշկած էր: Բայց առանց Պետրոսի վեասելու պատուիրեցին որ զազարէ այս խօսակցութիւնները Յիսուսի վերայով: Իսկ Պետրոս պատասխան տալով ըսաւ «Եթէ Աստուծոյ առջեւ ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձեզի մօրիկ ընեմ, դուք դատեցէ՛ք:» Պետրոս ազատ արձակուելով վերստին իր բարեկամներուն հետ կը միանայ եւ միաբանութեամբ մէկ հողիով կը սկսին ագօթել:

Գործնական կեդրոն: Ցոյց տուր Յիսուսի թշնամիներուն հակառակութիւնը եւ ինչպէս կը վարուէին Յիսուսի բարեկամները անոնց հանդէպ:



ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՂՕԹԻ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ

Այս բաժնին մէջ կը գնենք մի քանի բացատրութիւններ, հետեւեալ իրական և գործնական կերպերով:

1. Մանուկներ վարժութիւն ունենալու են, առաւօտները ամէն դասէ վերջ աղօթելու:

2. Իւրաքանչիւր դասին, ժամանակ տալ որ մանուկները կարճ եւ նշանակալից աղօթքներ մատուցանեն: Ուրիշներու համար եւս աղօթելու վարժութիւն ունենալու են: Աղօթքի լաւ վարժութիւն ունենալու համար պէտք է ուսուցիչը աղօթքի մը տարբեր մասերը կրկնել տայ և բացատրէ:

3. Ուսուցիչը վարժեցնելու է մանուկները որ իւրաքանչիւր դասէ վերջ մի քանի վայրկեան լռութեամբ Տիրոջ ձայնը մտիկ ընեն:

4. Պէտք է մանուկներ յաճախեն եկեղեցի, երբեմն ալ աղօթաժողովներ:

5. Մանուկները պէտք է տեղեկութիւն ստանան իրենց եկեղեցիի չէնքին մասին և անոր մէկ մանրանկարը չինեն՝ կաւէ կամ ցեխէ:

Ա. ՄԱՆՈՒԿ ՍԱՄՈՒԼԻ ԱՍՏՈՒԹՈՅ ԶԱՅՆԸ ԿԸ ԼՍԻ Ա. ԹԱԳ. Գ 2-18

Ոսկեղեմ Համար — «Ով Տէր, խօսէ, քանզի քու ծառադ մտիկ կ'ընէ:» հր. 9
Նպասակ — Յայտնենք մանուկներուն թէ Սամուէլ ինչպէս եւտուծոյ ձայնը լսեց:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Սամուէլ կը ծառայէ Տէրոջը տան մէջ: Այս բաժնին մէջ կը տեսնենք Սամուէլ մինչեւ 13-15 տարեկան: Մայրը տարին անգամ մը իրեն կ'այցելէ, ամէն անգամ բերելով իրեն նոր պատմածան մը: Սամուէլ քթանէ փրփրն մը հագած Տէրոջը առջեւ ծառայութիւն կ'ընէր ուրախութեամբ: Սամուէլ մանուկը օրէ օր կը մեծնար եւ Տէրոջը ու մարդոց հաճոյ էր:

2. Սամուէլ կը լսէ Աստուծոյ ձայնը: Հոս կը տեսնենք Սամուէլը որ առաջին անգամ լսեց Տէրոջը ձայնը, բայց չճանչնալով զայն Հեղին:

Բ. ՄԱՐԴ ՄԸ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ Կ'ՆՍՄՆԷ ԾԻՆՂ . ԻՆ 42, ԻԹ 14

Ոսկեղեմ Համար — «Եւ ահա ես քեզի հետ եմ ու ամէն ուր որ երթաս քեզ պիտի պահեմ:» Ծննդ. ԻՆ 15

Նպասակ — Հոս մանուկներ կը տեսնեն թէ ինչպէս Յակոբ Աստուծոյ ներկայութիւնը իրեն հետ կը զգայ, կը զօրանայ եւ կ'աղօթէ Աստուծոյ:

կարծեց եւ անոր քով գնաց, բայց Հեղի հասկցուց իրեն թէ ինչ ընելու է: Սամուէլ Հեղիի խօսքին համեմատ գնաց իր տեղը պառկեցաւ: Հոն կանթեղ մը կը վառէր եւ կը լուսաւորէր Տաճարը: Տէրը եկաւ կայնեցաւ առաջին անգամներուն պէս «Սամուէլ, Սամուէլ» կանչեց ու Սամուէլ ըսաւ, «Պօտ Տէր, քանզի Գու ծառադ մտիկ կ'ընէ:»

Վերջացնելով այս մասը թէ Աստուծոյ մի քանի բաներ Սամուէլի յայտնեց, եւ առաւօտուն Սամուէլ Աստուծոյ պատուիրածը Հեղիի պատմեց:

Գործնական կերպեր: Կիրակի օր ամէնքդ եկեղեցի գացէք:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. Յակոբ կը փախչի: Հոս կը տեսնենք թէ Ռեբեկայ իր պզտիկ որդին Յակոբը կը կանչէ եւ կ'ըսէ աւոր. «Ահա քու եղբայրդ Եսաւ քեզ մեղցնել ուզելով քեզի ծուղակ կը լարէ: Եւ հիմա որդեակ իմ, իմ խօսքս մտիկ ըրէ, ել ու փախիր:» Յակոբ հնազանդելով կը մեկնի դէպի Պառան, իր մօրեղբոր Լաբանի քով: Երեւակայէ Յակոբի կեանքի դժուարութիւնները:

2. Յակոբ երազին մէջ զԱստուած կը տեսնէ: Հոս նկատի առնենք Յակոբի ֆիզիքական յոգնութիւնը, եղբորը եւ գազաններու վախը, միանակութիւնը, բայց կը զգայ թէ Աստուած զինք կը պաշտպանէ, եւ քնանալով կը տեսնէ այդ երազը: Բացատրէ այդ երազը:

3. Յակոբ կը հաւատայ թէ Աստուած իրեն հետ է: Կը քաջալերուի եւ կը զօրանայ: Հոս կը տեսնեն մանուկներ թէ յաջորդ օր Յակոբ քունէն կ'արթննայ վստահութեամբ թէ Աստուծոյ ներկայութիւնը իրեն հետ է: Յակոբ առաւօտուն ելաւ, իր գլխուն տակ դրած քարը առնելով սեղան մը չինեց եւ զայն իւզով օծելով աղօթեց: Յակոբ քունէն ելած միջոցին անվախ, զօրաւոր եւ ուրախ կը զգար ինքզինք, որովհետեւ Աստուած իրեն հետ էր: Մօրեղբոր Լաբանի տունը հասնելով մեծ ուրախութիւն պատճառեց, նոյնպէս ինք ուրախացաւ զանոնք տեսնելով:

Գործնական կերպեր: Գործնական պատմութիւններով ցոյց տալ Աստուծոյ ներկայութիւնը ամենուրեք:

Գ. ԱՌՏՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԸ ԱՂՕԹԵԼ Ե ՄԱՐԿ. Ա 29-45

Ոսկեղեմ Համար — «Եւ առաւօտուն շատ կանուխ ելելով դեռ չլուսցած, ելաւ գնաց անապատ տեղ մը ու հոն աղօթք կ'ընէր:» Մարկ. Ա 35
Նպասակ — Թող մանուկներ տեսնեն որ Յիսուս կ'աղօթէր:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

1. «Սիմոնեց տունը:» Հոս կը տեսնեն մանուկներ թէ ինչպէս մարդիկ հաւաքուեցան Սիմոնեց տունը արեւը մարը մտած միջոցին: Յաջորդ օրուան վերջաւորութեան Յիսուսի բերին կաղեր եւ զիւհարներ: Քաղաքի ժողովուրդը հաւաքուած էր այդ տան քով. Յիսուս կ'օգնէր եւ կը բժշկէր զանոնք: Նոյն ժամուն Յիսուս պէտք մը կը զգայ քաղաքներ եւ զիւղեր չընելու, եւ իր երկնաւոր Հօր հետ խօսակցելու:

2. Անապատին մէջ իր երկնաւոր Հօրը հետ: Հոս կը տեսնեն մանուկներ թէ ինչպէս Յիսուս կանուխ կ'արթննար եւ կ'երթար առանձին ամառի տեղ մը աղօթելու:

3. Սիմոն և զբաղիները Յիսուսը

կը փնտռեն: Հոս կը տեսնենք Սիմոն և զբաղիները կանուխէն Յիսուսը կը փնտռեն, բայց չեն գտներ: Դաշտը կ'երթան եւ հոն կը գտնեն զԱյն առանձին: Հեռուն կենալով կը զիտեն Յիսուսի գէմքը որ կը փայլէր լոյսի նման: Երբ Յիսուսի աղօթքը վերջացաւ, ընկերացաւ Սիմոնի եւ անոր ընկերներուն: Իմաց տուն թէ շատ մը մարդիկ իրեն կը սպասեն: Բայց ինք կ'ըսէ թէ զիւղերը պիտի չըջի սորվեցնելու համար, որովհետեւ այս նպատակին համար եկած էր:

Գործնական կերպեր: Գաղափար մը աղօթքի և անոր ժամանակներու մասին: Այն տեղերը ուր կ'աղօթենք, պէտք է որ ամայի ըլլան եւ առանձին զգանք մենք զմեզ մեր երկնաւոր Հօր հետ:

Գ. ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ Ղուկ. Թ 28-36

Ոսկեղեն Համար — «Ատիկա է իմ սիրելի Որդիս:» Ղուկ. Թ 35

Նպասակ — Յայտնել մանուկներուն թէ ինչպէս մեր Տէրը Աստուծոյ հետ միացաւ լեռան վրայ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ —

1. Յիսուս լեռը կ'ելլէ: Հոս կը կը տեսնենք Հրեաներու հակասութիւնը մեր Տիրոջ հանդէպ: Նոյն առաւել տեսնուեալ էր որ Յիսուս Երուսաղէմ երթար: Իրեն հետ առնելով երեք աշակերտները, լեռը կ'ելլէ աղօթելու համար:

2. Կ'աղօթէ: Աղօթելով Ան կը միանայ իր Երկնաւոր Հօրը: Սոյն պահուն իր գէժքը կը փայլի, և իր զգեստը կը ձերմկնայ: Աշակերտները

կ'ապշին, և կը հաւատան թէ Ան իր Հօրը հետ կը խօսակցի, որովհետեւ զէժքը Աստուծոյ կը նմանէր: Անոնք կ'զգային թէ իրենք ալ Աստուծոյ հետ են, և կը փափաքին որ այդ տեսարանէն չբաժնուին:

Մեզմ ձայն մը. «Ատիկա է իմ սիրելի որդիս:»

Գործնական կեցութիւն. — Թոյլ տալ որ աղաք յիշեն այն կէտերը որոնց համար կ'աղօթեն: Պէտք է մանուկները յառաջ մղել աղօթելու մէջ:

Ե. ԱՂՕԹԵԼ ՍՈՐՎԵԼ Ղուկ. ԺԱ 1-13

Ոսկեղեն Համար — «Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր:» Ղուկ. ԺԱ 1

Նպասակ — Թէ Յիսուս ինչպէս աղօթել սորվեցուց իր աշակերտներուն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ —

1. Թող մանուկները երեւակայեն թէ Յիսուս և աշակերտներ զաշտը ելեր էին: Յիսուս հեռացաւ աղօթելու համար: Անոր վրայ փոփոխութիւն մը նշմարեցին: Փափաքեցան որ իրենք ալ Յիսուսի պէս աղօթեն:

2. Աշակերտները կը խնդրեն Վարդապետէն որ իրենց աղօթել սորվեցնէ: Յիսուս ուրախութեամբ կը սորվեցնէ Տէրունական աղօթքը:

Գործնական կեցութիւն. Տէրունական աղօթքը և ուրիշ աղօթքները չիտակ թող սորվին: Նաեւ թող վերլուծեն զանոնք:

2. Կ'ԱՂՕԹԵՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՄԱՐ Գործք ԺԲ 1-17

Ոսկեղեն Համար — «Եւ շատեր նստած աղօթք կ'ընէին:» Գործք ԺԲ 12

Նպասակ — Նկարագրել Պետրոսի անվախութիւնը բանտին մէջ: Չէր վախնար, քանզի Յիսուսի բարեկամն էր, և իր ընկերները կ'աղօթէին:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ —

1. Յիսուսի աշակերտներէն մէկը կը ձերբակալուի և բանտը կը նետուի: Հերովդէս Հոովմէն վերադառնալէ յետոյ վախցաւ իր թագաւորութեան համար: Եւ սկսաւ չարչարել Յիսուսի բարեկամները: Անոնցմէ մին սպաննեց և ուրիշ մըն ալ բանտարկեց:

2. Աշակերտները անդադար կ'աղօթեն բանտարկուած Պետրոսին համար: Երբ անխրաւութեան ենթար-

կուին, աղօթքի կը դիմեն:

3. Մինչ անոնք կ'աղօթեն, Պետրոս դուռը կը զարնէ: Անիկա իր ազատուելուն պատմութիւնը կ'ընէ:

Գործնական կեցութիւն. — Նկարագրէ բանտի կեանքը, և այն անձերը որ կը բանտարկէին Յիսուսի բարեկամները: Վերջինները անխրաւ տեղ կը բանտարկուէին, բայց չէին վախնար, քանի որ Յիսուսը կը սիրէին: Պատմել նման պատմութիւններ:

Է. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԸ ԿԸ ՄԱՔԲԷ Ղուկ. ԺԹ 45-48, ԻՍ 37

Ոսկեղեն Համար — «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի:» Մատթ. ԻՍ 13

Նպասակ — Ինչպէս պէտք է հոգ տանիլ եկեղեցւոյն:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Յիսուս մեծ բազմութեան մը հետ Երուսաղէմ կուգայ, և իր Երկնաւոր Հօրը Տունը կը մտնէ. բոլոր առններէն աւելի կը սիրէր զայն:

2. Յիսուս իր Հօրը տան մէջ: Յիշէ այն բաները որ Յիսուս տեսաւ տաճարին մէջ: Անիկա տաճարէն դուրս հանեց ամէն անոնք որ կը ծախէին ու կը գնէին: «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, բայց դուք ատիկա աւաղակներու այր ըրիք:»

Թող չտուաւ որ հոն առուաւոր ընեն:

3. Յիսուս կը սորվեցնէ իր Հօրը սիրոյն մասին, և թէ ինչպէս պէտք էր զԱյն պաշտել: Յետոյ կ'երթայ իր բարեկամ Ղազարոսի տունը՝ զի չէրը հոն անցնելու համար: Առաւել ետ Տաճարը կուգայ սորվեցնելու և աղօթելու համար:

Գործնական կեցութիւն. — Ինչպէս պէտք է Աստուծոյ Տունը պահպանել, զայն մաքուր պահել, մէջը յարգանքով կենալ:

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հոգեւոր կեանքի աճման և զարգացման համար երկու կարեւոր ազդակներ կան — Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը և հոգեւոր ճշմարտութեանց ուսումնասիրութիւն: Այս երկուքը պէտք է միասին ընթանան:

Աբ. Գրոց դասերը այս երկուքէն առաւելապէս երկրորդը կը զօրացնեն. սակայն և այնպէս կարեւոր է նաեւ առաջինը: Աստուծոյ գիտակցութիւնը զարգացնելու համար ունինք Պաշտամունքը:

Մեծ անհրաժեշտութիւն մըն է պաշտամունքը: Պէտք է որ ամէն Աբ. Գրոց դասէն առաջ, մանուկները ունենան պաշտամունքի և երկրպագութեան պահ մը:

Ստորեւ կուտանք պաշտամունքի մի քանի նմոյշներ: Ծնողք և ուսուցիչներ կրնան նման պաշտամունքի ծրագիրներ մշակել:

Պաշտամունքը վերացուցիչ ընելու համար պէտք է միջանի կէտերու ուղադրութիւն դարձնել:

1. Պէտք է պաշտամունքի ամէն մէկ մասը կանխապէս պատրաստուած ըլլայ:

2. Ուշ դրուելու է սենեակին մաքրութեան և կոկիկութեան: Կարելի եղածին չափ աղմուկէ հեռու տեղ մը պէտք է փնտռել:

3. Մանուկներուն յարգանքը դիրքը ապահովելու համար ամէն միջոց պէտք է գործածել — աղօթքի ժամանակ գոց աչքեր, յարգալից կեցուածք, խոնարհած գլուխներ, անաղմուկ նիստ ու կաց և ճշդապահութիւն:

4. Աբ. Գրոց ընթերցումը յստակ պէտք է ըլլայ և յարմար դասին: Եղած աղօթքը մանուկներուն հասկնալի պէտք է ըլլայ և իրենց կարիքներուն համաձայն:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ

1.—

Նիւթ.— Յիսուս մեզ կը սիրէ

Ծրագիր.—

Երգ՝ Փառք Քեզ Հայր Իմ 366

Սաղմոս՝ ԻԳ

Աղօթք՝ Տէրունական

Ուղերձ՝ Յիսուս մեզ կը սիրէ —
Ինչո՞ւ, ինչե՞ն գիտենք,
Ի՞նչ ըրաւ, ի՞նչ կ'ընէ:

Երգ՝ 355

Աղօթք՝ Առաջնորդը կ'աղօթէ:

2.—

Նիւթ.— Ի՞նչպէս կրնանք Յիսուսը

Ծրագիր.— [սիրելի

Սաղմոս՝ Ժ (եթէ գոց չեն գիտեր
առաջնորդը կը կարգայ)

Երգ՝ 58րդ

Աղօթք՝ Առաջնորդը գոհունակու
թեան եւ երախտագիտու
թեան աղօթք մը կ'ընէ:Ուղերձ՝ Խորհուրդներդ կեդրոնա
ցուր 362րդ երգին վրայ: Եւ
թէ գիտեն այս երգը թող եր
գեն, եթէ չեն գիտեր, նայէ
որ սորվին այսօր:

Երգ՝ 362րդ

Աղօթք՝ Աղօթքի պահուն բոլոր
ուսուցիչները թող բա
ժին առնեն:

3.—

Նիւթ.— Բնութիւնը մեզի համար
իսկ մենք Աստուծոյ համար

Ծրագիր.—

Սաղմոս՝ Ը (առաջնորդը կը կար
գայ)

Երգ՝ 341 առաջին համարը միայն

Աղօթք՝ Առաջնորդը

Ուղերձ՝ Խորհուրդներդ Սաղմոսին
վերջին մասին վրայ կեդրո
նացուր, թէ բնութիւնը իր
ամէն բանովը մեզի համարէ, Աստուած մեզ հոգացեր
է: Ասոր փոխարէն ի՞նչ կըր
նանք ընել:Աղօթք՝ «Մեր սիրելի Հայրը, չը
նորհակալ ենք Քեզմէ որ մեզ
կը սիրես, որ մեզ կը խնա
մես, որ մեզի այսքան գեղե
ցիկ բաներ նուիրեցիր, եւ
կ'ուզես որ մենք բարի ըլլանք
եւ ձեր սրտերը Քեզի տանք:
Օգնէ որ այսպէս ընենք: Ա
մէն:»

4.—

Նիւթ.— Պատկերի պաշտամունք

Այսօր պաշտամունքին պատկեր
մը բեր, Յիսուս Տաճարին մէջ, կամ
Յիսուս մանուկները կը սիրէ, կամ
Յիսուս կորսուած ոչխարը կը փնտ
ռէ, գտած կը բերէ, հիւանդները
կը բժշկէ, եւն: Երգերը ըստ յար
մարութեան ընտրէ: Նոյնպէս եւ
Սաղմոսը կամ հատուածը որ պիտի
կարդաս կամ միասնաբար ըէ՛ք:(Աստ Ընդեր կարելի է կրկնել ու
րի՞ւր որ մը Հին Կտակարանէն պատկե
րով մը:)

5.—

Նիւթ.— Սբ. Գիրքը Աստուծոյ մա
սին կը խօսի մեզի: Ի՞նչ:

Ծրագիր.—


Երգ՝ 48. 1, 2

Ուղերձ՝ Ընդլայնէ այս երգը, կամ
պատասխանէ նիւթի «Ի՞նչ»ին:
Գործածէ այս համարները —
Ծննդ. Ա. 1, Սաղմ. ԺԴ 14,
Ես. ԿԴ 8, Սաղմ. Դ 3, 6, 7,
Ա. Յովհ. Դ 10: Եթէ Ս. Գիրք
չունենայինք ի՞նչ պիտի ըլլար:

Երգ՝ 49րդ

Աղօթք՝ Գոհունակութիւն Սուրբ
Գրքի մեզի չնորհած օրհնու
թեանց համար:

32-62



ԿԻՐԱԿՆՕՐԵՆԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՆԵՐ

1941 — ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍԵԱՅ

5 ՅՈՒՆՈՒԱՐ		Դաս 1
Ծնունդի Պատգամը		
Դաս. Եսայ. Կ 1-3, Ղուկ. Բ 8-14, 25-32:		
Ո. Հ. Երկինքի բարձրության մեջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մեջ հանութիւն: Ղուկ. Բ 14		
12 ՅՈՒՆՈՒԱՐ		Դաս 2
Աքրահամ՝ Հառաքի Առաջնորդը		
Դաս. Ծննդ. ԺԱ. 3—ԺԲ. 8:		
Ո. Հ. Հառաքի, երբ Աքրահամ կանչուեցաւ, մէկ քաւ այն տեղը եղեղո, գործաւանգութիւն պիտի առնէր. եւ եղաւ գնաց ու չէր գիտէր ո՛րտեղ երբաւ: Եբր. ԺԱ. 8		
19 ՅՈՒՆՈՒԱՐ		Դաս 3
Քերտահամ՝ Պանդուխտ Աւետեաց Երկրին ՄԷջ		
Դաս. Ծննդ. ԺԳ. 1-18, ԺԳ. 1-16:		
Ո. Հ. Հառաքի պանդխտացաւ Աւետեաց երկրին մեջ որպէս քիօսարութեան մեջ... վաճակի իմ կը սպասէր այն հիմնով հաստատած էալամին, որուն նախարարէր ու արարիչը Աստուծոյ է:		
Եբր. ԺԱ. 9, 10		
26 ՅՈՒՆՈՒԱՐ		Դաս 4
Հառաքի Տեւոթ		
Դաս. Ծննդ. ԽԲ.		
Ո. Հ. Վաճակի այս Աստուծոյ մեր Աստուծոյ է յաւիտեան յաւիտեան. Անկիւս պիտի առաջնորդէ մեզ մինչեւ ի մահ: Սաղմ. ԽԸ 14		
2 ՓԵՏՐՈՒԱՐ		Դաս 5
Երազող Տղան		
Ո. Հ. Եւ եւմ Աքրահամի Աստուծոյ, եւ Իսահակի Աստուծոյ, ու Յակոբի Աստուծոյ: Աստուծոյ մեղիներուն Աստուծոյ չէ. հաւատք կենդանիներուն: Մատթ. ԽԳ 32		
9 ՓԵՏՐՈՒԱՐ		Դաս 6
Վառանգի Գիտիւն		
Դաս. Ծննդ. ԼԹ 1-6, 19-23, ԽԶ:		
Ո. Հ. Յոժարութեամբ ծառայելով որպէս քիօսարութեան մեջ, զիսկալով որ ամեն մեղք իմ կը քարտէ որ քիօս, նոյնը Տեւոթին պիտի ընդունի, քի՛ ծառայ ըլլալ եւ քի՛ ազատ: Եփես. 9 7, 8		
16 ՓԵՏՐՈՒԱՐ		Դաս 7
Իմաստուն Գաղաթաղէթը		
Դաս. Ծննդ. ԽԱ		
Ո. Հ. Ըստ անոր իր տեղը, Ապրիս քարի ու հաւատարիմ ծառայ, դուն որ քի՛ քաննեմ մեջ հաւատարիմ եղաւ, մեզ աս քաննեալ վրայ պիտի կենտնի, մէկու եւ տեղը ուրախութեամբ մեջ: Մատթ. ԽԶ 21		
23 ՓԵՏՐՈՒԱՐ		Դաս 8
Մեծապի Եղբայրը		
Դաս. Ծննդ. ԽԳ 1-5, 29-38, ԽԺ 1-16, 24-34, ԽԴ 1-18, ԽԵ, ԽԶ 11:		
Ո. Հ. Եւ իրարու մէջ քաղցր եղիմ, գրած, ճշտով իրարու, ինչպէս Աստուծոյ Գրքի տալ մերեց ձեզի: Եփես. Դ 32		
2 ՄԱՐՏ		Դաս 9
Յիսուս Գործի կը ջանաւորի		
Դաս. Մատթ. Դ 12-25, Թ 9-13:		
Ո. Հ. Իմեզի դուք այս քանին համար կանչուեցաւ, վաճակի Գրքիստալ ալ ձեզի համար չարչարուեցաւ, ու ձեզի օրինակ դուք որպէս իր շաղկերուն մեղիք: Ա ՊԵՏ. Բ 21		
9 ՄԱՐՏ		Դաս 10
Առաջնորդի Գործն ու Ջօշուրիւնը		
Դաս. Մատթ. Թ 1-8 27-38:		
Ո. Հ. Պատգամ քարտէ ընտրով ու Աստուծոյ բոլոր սանցումները բեղեղով, քանցի Աստուծոյ Իրին մէջ էր: Գործի Ժ 38		
16 ՄԱՐՏ		Դաս 11
Երկնային Տաղքի		
Դաս. Մատթ. Դ 35-41, Ե 1-20:		
Ո. Հ. Վաճակի Աստուծոյ մեղի երկնային հոգի չտաւ, հապա գործութեան, սիրոյ եւ գաւառութեան: Բ ՏԻՆ. Ա 7		
23 ՄԱՐՏ		Դաս 12
Հաղաւտութեան Գիտագրաւի		
Դաս. Մատթ. ԺԲ 1-32		
Ո. Հ. Երանի է ձեզի, երբ կը նախաճեմ ձեզ ու կը հաղածեմ, եւ տուտ տեղը ամեն կերպ գիտ խօսեալ կը խօսեմ ձեր վրայ ինձի համար: Մատթ. Ե 11		
30 ՄԱՐՏ		Դաս 13
Կարտաւոր Փրկիչ		
Դաս. Ղուկ. ԺԹ 1-10		
Ո. Հ. Վաճակի Որդին Մարդոց եղաւ որպէս իրարու իմեղի ու քիօս: Ղուկ. ԺԹ 10		

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ.—

Ինչպէս որ առաջունէ ծանուցած էինք, 26րդ դասով ներկայ տարուան վեցամսեայ ծրագիրը լրացուցած կ'ըլլանք: Ամառուայ երեք ամիսներուն համար մեր դասերը աւելի սեղմ եւ հակիրճ ձեւի մէջ ներկայացնելու գաղափարը ունեցած էինք, նկատի ունենալով որ Պէյրութի շրջանի Կիրակնօրեայ Դպրոցներու մեծամասնութիւնը գոց կը մնան եւ կամ ալ իրենց գործունէութիւնը սովորականէն շատ աւելի կը պակսեցնեն: Այս մտադրութեամբ ճամբայ ելլելու ատեն տեսանք որ նոյն ձեւով պատրաստուած դասեր արդէն հրատարակուած են անցեալ ամառ «Ամառնային Սբ. Գրոց Դասեր» անունին տակ, որոնք մեր Կիրակնօրեայ Դպրոցներու նոր են: Հալէպի Կ. Դպրոցներու Տեղական Միութեան հաւանութեամբ յարմար տեսնուեցաւ որ սոյն դասերը ընդգրկուին եւ ամառուայ համար Կ. Դպրոցներուն հրամցուին: Այս տեսակ կարգադրութիւն մը մեզի կը տրամադրէ աւելի լայն ժամանակ եւ պիտոճէյի դիւրութիւն յառաջիկայ աշնան մեր դասերը ծրագրելու եւ պատրաստելու: Ուրախ ենք որ Զանիցի առաջնորդները սիրայօժար չտնուեցան այս օժանդակութիւնը մեզի տալու. մեր շնորհակալութիւնները:

Պատրաստուած դասերը կարճ, ամփոփ եւ ուրուագծային են. թելադրութիւններ կան միայն, զորս ուսուցիչը պարտի ժամանակ յատկացնելով ընդլայնել եւ կոկկել որպէսզի կարենայ իր աշակերտներուն պէտքին յարմարցնել. եւ այդ ըստ պատշաճի ընելու համար կը թելադրենք այն Կ. Դպրոցներուն որոնք այս կամ այն պատճառաւ ուսուցչական ժողովները զանց առած էին, զոնէ այս դասերու առընչութեամբ իրենց շաբաթական ուսուցչական ժողովները վերսկսին. այլապէս կը խորհինք թէ սոյն դասերը իրենց օգտակարութենէն շատ բան պիտի կորսնցնեն:

«Ամառնային Սբ. Գրոց դասեր»ը կը պարունակէ 21 դասեր, որոնց 13ը միայն մեզի պէտք պիտի ըլլան: Իւրաքանչիւր գրքոյկի գինն է 8 Ս. Դ. Ընտրուած դասերը հետեւեալներն են.

- Առաջին հինգ դասեր — «Անոնք որոնց Յիսուս օգնեց»:
 6 Յուլիս — Դաս Ա. (էջ 3): 13 Յուլիս — Դաս Բ. (էջ 3): 20 Յուլիս — Դաս Գ. (էջ 4): 27 Յուլիս — Դաս Դ. (էջ 5): 3 Օգոստոս — Դաս Ե. (էջ 5):
 Յաջորդ երեք դասերը — «Անոնք որ սիրեցին Յիսուսը եւ օգնեցին Անոր»:
 10 Օգոստոս — Դաս Ա. (էջ 7): 17 Օգոստոս — Դաս Դ. (էջ 9): 24 Օգոստոս — Դաս Ե. (էջ 9):
 Վերջին հինգ դասերը — «Պատմութիւններ Աղօթքի եւ Պաշտամունքի»:
 31 Օգոստոս — Դաս Ա. (էջ 12): 7 Սեպտեմբեր — Դաս Բ. (էջ 12): 14 Սեպտեմբեր — Դաս Գ. (էջ 13): 21 Սեպտեմբեր — Դաս Դ. (էջ 14): 28 Սեպտեմբեր — Դաս Ե. (էջ 15):

Կ'աղօթենք որ սոյն կարգադրութիւնը իր օգտակար ազդեցութիւնը ունենայ մեր մատաղ սերունդին վրայ:

ՍԲ. ԳՐԲԷՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԿՈՑ ՍՈՐՎԵԼՈՒ ՅԱՐՄԱՐ

[շար. կողմի դուրսի կողմէն]

- Ա. Կրն. ԺԱ. 23—28 Հաղորդութիւն
 ԺԳ Սիրոյ երգը
 Բ. Կրն. Դ. 16—18 Արտաքին եւ ներքին
 Դադ. Ե. 22 — Զ. 9 Հոգիին պտուղը
 Եփես. Զ. 10—18 Քաջ եղէք Տէրօջմով
 Փիլիպ. Բ. 3—11 Յիսուսի միտքը
 Գ. 13—14 Բան մը կայ
 Դ. 4—8 Ուրախ եղէք Տէրօջմով
 Ա. Թես. Ե. 15—23 Զգուշացէք, չըլլայ...
 Բ. Տիմ. Գ. 14—17 Սակայն դուն հաստատ
 կեցիր
 Բ. Տիմ. Դ. 6—8 Բարի պատերազմը
 Եբր. ԺԱ. 1-10, 32—ԺԲ. 2 Հաւատքի երգը
 Յակ. Ա. 22—27 Խօսքը կատարողներ
 Բ. Պետ. Ա. 5—11 Բոլոր ջանքերիդ
 Ա. Յվն. Գ. 1—3 Ի՜նչպիսի սէր է
 Դ. 7—11 Աստուած սէր է
 Յայտ. Գ. 20—21 Ահա դուռը կայներ եմ
 Է. 9—17 Մեծ բազմութիւնը
 ԻԱ. 1-5, 22 — ԻԲ. 5 Աբ. Քաղաքը,
 նոր Երուսաղէմ

«Այս Օրինաց Գիրքը քու բերնէդ չգասնի, հապա գիշեր ու ցօրէկ անոր վրայ մտածես, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես, քանզի այն ատեն քու գործերդ յառաջ կը սանիս եւ այն ատեն յաջողութիւն կ'ունենաս»
 Յեսու Ա. 8

ՄԲ. ԳՐԲԷՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ԳՈՑ ՍՈՐՎԵԼՈՒ ՅԵՐՄԱՐ

- Ելից Ի 1—17 Տասը պատուիրանքներ
Թուոց Զ 24—26 Ահարոնի օրհնութիւնը
Բ 0ր. Զ 4—9 Մահի ըրէ, ով Իսրայէլ
Սաղմոս Ա, ԺԹ, ԻԳ, ԻԴ, ԽԶ, ԶԴ, Դ,
ԴԱ, ԴԵ 1—7ա, ԴԶ, ձ, ձԳ, ձԺԹ
9—11, ձԻԱ, ձԽԵ:
Եսայի Թ 6—7 Մեզի որդի մը արուեստաւ
Եսայի Խ 3—14, 28—31, ԾԳ 1—6, ԾԵ
1—11, ԿԱ 1—3
Միքիա Զ 6—8 Տէրոջ առջեւ ինչո՞վ եր-
թամ
Մատթ. Ե 1—16 Երանելիներ
Ե 43—48 Ուստի կատարեալ եղէք
Զ 9—13 Տէրունական Աղօթք
Է 7—11 Խնդրեցէք և պիտի
արուի ձեզի
ԺԱ 28—30 Եկէք ինձի...
ԻԵ 31—46 Երբ Որդին մարդոյ զայ
ԻԸ 18—20 Գացէք... աշակերտեցէք
Մարկ. Ժ 35—45 Չեկաւ ապաստարան թիւն
ընդունելու...
Ղուկ. Ա 46—53 Իմ անձս կը մեծցնէ Տէրը
Բ 29—32 Այլ արձակես Քու ծառագ
Ժ 25—37 Բարի Մանարացին
ԺԲ 13—31 Կեանքը կերակուրէն
աւելի է:
ԺԵ 11—24 Անառակ որդին
ԺԸ 9—14 Փարիսեցին և մաքսաւոր
Յովհ. Գ 14—17 Աստուած այնպէս սիրեց
աշխարհը
Զ 35, 37—40 Կենաց Հացը
Ժ 1—16 Բարի Հովիւը
ԺԳ 1—14 Սիրահրնիդ չխոռովի
ԺԵ 1—8 Ես եմ ճշմարիտ որթը
Գործք Ժ 34—35 Աստուծոյ քով աչառու-
թիւն չկայ
ԺԷ 22—31 Պօղոս Առաքեալի քարոզը
Հովհմ. Ը 1-4, 14-17 Իսկ արդ զատապար-
տութիւն չկայ
Ը 31-35, 37-39 Ո՞վ կրնայ մեզի
դէմ ըլլալ
ԺԲ Կենդանի զոհ մը

[շար. կողմի ներսի կողմը]

<< Ազգային գրադարան



NL0151439

